

ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

**1863-1864 թթ. ՄԻ ՔԱՆԻ ԱՆՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ
ԱՂԱՍՏԵՎԻ ՀՈՎՏԻ ՎԱՆՔԵՐԻ ԱՎԵՐԱԿ ՎԻՃԱԿԻ ԵՎ
ՀԱՂԱՐԾԻՆԸ ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հովտի խոր ձորերի պտուկներին ու լեռների ծերպերին ծվարած Աղստևի վանքերը դարեր շարունակ, «ձեռքը դրած ճակատին», հավատացյալների կարոտով տոգորված, լուռ ու մունջ հայցել են մարդկանցից օգնություն: Իրավիճակը անհամ-գըստացրել է բոլորին, մտահոգել հոգևոր առաջնորդներին, ազգին, Ս. Էջմիածնին: Պետականության բացակայության, մերքին և արտաքին քաղաքական անմաստ վիճակի ու հարաբերությունների պատճառով հոգևոր այրերին թույլ չէին տալիս խնդիրներ լուծելու. նրանց գործադրած ջանքերը գրեթե մնում էին անարդյունք: Պահանջվում էին ոչ միայն նյութական միջոցներ, այլև ազգի նվիրյալների գործնա-կան, հետևողական, անձնագրի աշխատանք: Թեև լուսաբանված փաստերի դրա-կան օրինակներ կան, սակայն անբավարար են: Պետք է ենթադրել, որ առկա վա-վերագրերից հետագոտողների աչքից վրիպել կամ դուրս են մնացել նաև ԱՆ-ՆՇԱՆ թվացող առանձին վավերագրեր: Ս. Էջմիածնի Սիմոնի արձանագրություն-ներից մի քանիսը կարևորում են առաջադրված հարցերի անհրաժեշտությունը: Ներկայացնում ենք այդ փաստաթղթերից մի քանիսը:

ԱՌԱՋԻՆ փաստաթուղթը վերաբերում է Հաղարծին վանքին:

(Ֆոնդ 58, ցուցակ 5, թղթապանակ 60, գործ 213, էջ 454):

ԵՐԿՐՈՐԴԻ փաստաթուղթը՝ Սուրբ Էջմիածնի Սիմոնի 1864 թ. որոշումն է՝ Համ-գալչիման գյուղի եկեղեցական գումարները Հաղարծին վանքի կարիքների և բարե-նորոգման նպատակներին ծառայեցնելու մասին:

(ՀՀ ՊՊԿԱ ֆ-56, ց-5, թղթապանակ 61, գ-368, էջ 318):

ԵՐԿՐՈՐԴԻ՝ Սուրբ Էջմիածնի Սիմոնի անդամ Պողոս վարդապետի՝ նոր աշխա-տանքի անցնելու թույլտվության և Սիմոնի 1864 թ. որոշումն է:

(Նույն տեղում, ֆ-56, ց-1, թղթապանակ 62, գ-313, էջ 535):

ՉՈՐՐՈՐԴԸ՝ Հաղարծին վանքի նախկին վանահայր, արդեն Սիմոնի անդամ Պողոս վարդապետին Հաղարծին գնալու և վերադառնալու համար մեկ ամիս արձակուրդ տալու մասին է:

(Նույն տեղում, ֆ-56, ց-5, թղթապանակ 63, գ-36, էջ 40)*:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր վավերագիր առանձին-առանձին պարունակում է ուշադրության արժանի կարևոր փաստեր.

ԱՌԱՋԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ա) որ Պողոս վարդապետը դեռևս 1862 թվականին կամավոր ստանձնել է Հաղարծին վանքի վանահայրության պարտականությունները, ձեռնամուխ է եղել որոշ բարեկարգման աշխատանքների, իսկ 1863-ի նոյեմբերի 13-ին Մատթեոս Կաթողիկոսին է ներկայացնում դիմում-հայտարարություն և նկարագրում Աղստի հովտի վանքերի ծայրահեղ անմխիթար վիճակը, որոնք երկար տարիներ անմարդաբնակ-անխնամ մնալու հետևանքով դարձել են զազանների ու թափառող կենդանիների որջեր, օտարների խաշների մակադատելներ:

բ) որ Հայր Պողոսը, մտահոգվելով Հաղարծին վանքի վիճակով, որոշում է պաշտոնապես ստանձնել այդ սրբավայրի բարեմորգման աշխատանքները, բնակվել այնտեղ և խնդրում վեհափառից. «... Աղաչեմ ազատ կացուցանել զիս ի թուաց միաբանից Ս. Էջմիածնի եւ հրամայել ինձ զբնակութեամբք իմ կալնուլ յայն մեծաստան, որով իմ եւ եղէջ յաիտեան զոհաբան զշնորհաց ԶԵՐՈՒՄ՝ վերաստիճան ՕՐԻՆՕՔ»: Կաթողիկոսը կարգադրում է Սիմոնին՝ «Պողոս վարդապետ Տէր Մարգարեան միաբան Մայր Աթոռոյն կարգեցաք արդէն ըստ թախանձանացն վանահայր առանձին կոնդակաւ մերով ի վանս Հաղարծնի, զորմէ հարկ է եւ Ատեանիդ ըստ կարգին ազդ առնել մարմնատր իշխանութիւն ի զիտութիւն անցին եւ յապահովութիւն վիճակի վանահօրն»:

գ) նկատի առնելով, որ Հաղարծնի վանքը գտնվում է Վրաստանի և Իմերեթի տնօրինության ներքո, Սիմոնը անհրաժեշտ է գտնում ծանուցել Տփլիսի կոնսիստորիային, «սո ի հոգալոյ զամենայն զկարելորսն պահպանութեամբ եւ իրաւանց վանուցն, համեմատ համանման նմին վանօրէից գտանեցելոց ընդ նորան տեսչութեամբ: Ջորմէ հրամանագրով տուեալ տեղեկութիւն եւ նորոգ նշանակեալ վանահօր նորին Պողոս վարդապետին պատուիրել ի դէպս հարկատրութեանց եւ այլոց գործոց վերելոց վանքական կառավարութեան դիմել ուղղակի յԱտեան կոնսիստորիային, իբրեւ մերձատր իւրում անմիջական իշխանութեան եւ ըստ այսմ կազմեալ

* Մինչ այդ վարդապետը միայն միաբանության անդամ էր, իսկ 1864-ից նա նշանակվում է Սիմոնի անդամ, ինչի վկայությունն է 1864 թ. օգոստոսի 1-ի արձանագրությունը:

զնոր գործ, այժմէն իսկ աւարտեալ համարել վասն տարոյ ի ժամուան ի դիւանն ի պահեստ»:

ԵՐԿՐՈՐԴ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ա) Իբրև նախորդի շարունակություն, Սինոդի՝ 1864 թվականի մարտի 11-ի արձանագրությունից տեղեկանում ենք, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հետևողական և գործնական աշխատանք է տարել՝ իր կողմից հանձնարարած խնդրի իրականացման գործում: Էջմիածինը ոչ միայն կարևորում է հարցի նշանակությունը, այլ նաև կազմակերպչական միջոցներ է ձեռնարկում: Ալեքսանդրապոլի հոգևոր կառավարությունը կատարում է Սինոդի հանձնարարությունը և այդ մասին իրազեկում վերջինիս ի գիտություն:

բ) Մինևույն ժամանակ, Ալեքսանդրապոլի հոգևոր կառավարությունը քննության է առնում Կաթողիկոսի հունվարի 28-ի (1864 թ.) թիվ 80 կոմդակը:

ԵՐՐՈՐԴ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիշյալ արձանագրություններն ուսումնասիրելու ընթացքում ուշադրություն գրավեց նաև մի հարց. այն, որ Սինոդի անդամների կազմը, որը պետք է բաղկացած լիներ յոթ հոգուց, սակայն, մինչ այդ, բոլոր արձանագրությունները ստորագրվել են երեք անդամների կողմից և վավերացվել ատենապետ Մատթեոս Կաթողիկոսի ձեռամբ: Բայց արդեն նույն ամսի օգոստոսի 21-ի արձանագրությունից հետևում է, որ վերացվել է այդ խախտումը և Պողոս վարդապետ Տեր-Մարգարյանը այդ օրվանից համարվել է Սինոդի անդամ և կատարել իր պաշտոնական պարտականությունները:

Ցանկանում ենք անդրադառնալ ՍԻՆՈՂԻ ստեղծման հարցին, որը կատարվեց Հայաստանի կողմից ռուսական կողմնորոշում ընդունելուց հետո՝ 1836 թվականի Պոլոժենիայի (Կանոնադրությամբ) հիման վրա:

Ինչպես հայտնի է, Մայր Աթոռ Ս. Էջմիածինն իր գոյության օրից երբեք մնան օրգան չի ունեցել, ինքն է միշտ տնօրինել իր խնդիրները, երկրի խնդիրները: Սակայն Սինոդի ստեղծումը ինքնանպատակ չէր. ցարական իշխանության կողմից այն պարտադրված մի վարչախնկողական օրգան էր Հայ Եկեղեցու համակարգում, նպատակով՝ հսկողության տակ վերցնել և տեսադաշտում պահել Եկեղեցու ամբողջ գործունեությունը: Այսպես, օրինակ, յուրաքանչյուր որոշում պետք է համաձայնեցվեր և հաստատվեր փոխարքայի կողմից, իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսի թեկնածությունը պետք է հաստատվեր ռուսական կայսեր կողմից, էլ չենք խոսում

դպրոցների և այլ հարցերի վերաբերյալ: Դրանով սահմանափակվել էր դարերով հիմնավորված Հայ Եկեղեցու ինքնուրույն գործունեության իրավունքը:

Վերջապես՝ ՉՈՐՐՈՐԴ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ 1864 թվականի Սինոդի արձանագրությունն է: Այս արձանագրությունից տեղեկանում ենք՝

ա) որ Պողոս վարդապետ Տեր-Մարգարյանը, մինչև Սինոդի անդամ նշանակվելը, 1862 թվականից արդեն կատարելիս է եղել որոշ աշխատանքներ Հաղարծին վանքում:

բ) որ Տեր Հորը Սինոդի անդամ նշանակելու թույլտվությունը կամ համաձայնությունը կաթողիկոսի միջնորդությամբ է եղել, որից հետո է միայն հաստատվել Կովկասի փոխարքայի կողմից:

գ) որ տվյալ սեպտեմբերի 18-ի միտում Սինոդը քննարկել է նաև Պողոս վարդապետի դիմումը մեկամսյա արձակուրդի թույլտվություն ստանալու՝ նախկինում ձեռնարկած աշխատանքները վերահսկելու համար Հաղարծին մեկնելու:

Այս ամենից բխում է կարևոր հետևություն, որ, չնայած երկրի առկա բազում դժվարություններին, ներքին և արտաքին տնտեսական, քաղաքական ծանր վիճակին, Սուրբ Էջմիածինը և նրա հոգևոր ղեկավարությունը հնարավոր ամեն ինչ գործադրում են՝ օտարված և քայքայված սրբավայրերը ազգին վերադարձնելու, բարեկարգելու և հոգևոր կյանքն այնտեղ վերականգնելու համար, որը հաջողվում է միայն Հաղարծնում, վանահայր Պողոս վարդապետի տասնամյակների եռանդուն ջանքերի շնորհիվ:

Հայաստանի Հանրապետության ՊՊԿ արխիվի

ֆոնդ 56, ցուցակ 5, թղթապանակ 60, գործ 218,

էջ 454-455, տե՛ս 8-րդ ցուցակի էջ 41

ԷԶՄԻԱԾՆԻ ՍԻՆՈԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փաստաթուղթ առաջին

Ի 13 նոյեմբերի 1863 ամի, Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Լուսաւորչական Հայոց Սինոդի Սրբոյ Էջմիածնի լուսն զխնդրագիր միաբանի Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Պօղոս վարդապետ Տեր Մարգարեանի յանուն Նորին Վեհափառութեան ի 29 յուլիսի տարույս, յորում գրի թէ յամենայն քայլափոխս հայրենասիրաց անձանց ի Հայաստան գրեթէ ընդ հարկամին աչաց իբրեւ զվճիտ ճառագայթս արեգական ծագելոյ ընդ արշալոյսն առաւօտուն յամենայն ծերպոց վիմաց ի ձորոց եւ ի քարանձաւաց, զերահրաշ կերտուածք սրբութեան տաճարաց, կացեալք անբարբառ վկայք մեծագործութեան եւ առաքինութեան մերոց երջանիկ

նախնեաց, այլ չստեմ բաւ պերճ փառաց Հայաստանի, զի այնքիկ վկայք սրբութեան, որք երբեմն ի փառագարդ վայելչութիւն եւ ի շինութիւն հանդիսարան կացեալ աստուածաբանական եւ փիլիսոփայական մակագութեամբ եւ մարդաշատ բազմութեամբ գերզոց իրեանց զօրհնաբանութեամբ զձայն ընդ ամմարմին դասուց զուզակցեալք ի բարձունս անեղական Աթոռոյն աստուածային մատուցանելին բուրվատաւ աղօթից ի պատարագ ընդունելի, աւա՛ղ այսօր թաղեալք ի փոշի մոռացութեան կիսակործան աներակօք որջք եւ լիայք վայրասուն էրէոց ու անարգել զազանաց եւ այսպէս ցայսօր ժամանակի զանեղծանելի առաքինութիւնս մերոց երջանկափառ նախնեաց ընդ աղօտ արտափայլեալ, տակաւին գիտեն շարժիլ ի կարեկցութեան ո՛չ միայն զորդիս երկանց սուրբ ծննդեան իրեանց, այլեւ զամենայն ուղիւն միանգամայն զայց ելեալս ինքեանց ի թիւս այսոցիկ վանօրէից գտանի ամայի արդէն հոչակատր մեծաստանն անուանեալ Հաղարծին, շինեալն ի ՕԻ (=1071) ի Բագրատունի թագաւորաց մերոց, որոց շիրիմք հանգստեան գտանի անդէն, որ տուն եւս անուանիր յառաջագոյն Ջաքարէ եւ ի վանէ Բագրատունի մեծ սպասաւարաց ազգիս, զորոց զգեղեցկադիր շքեղութիւն ցուցանեն կիսակործան քարիւք նորին, որք մամոռապատեալք մաքառին դեռեւս ընդ անգութ ժամանակին, անօգնական ամենեւին ակնկալեալ միայն վերին այցելութեամբ: Վեհափառ Տէ՛ր. ծնանի մարդ յաշխարհ ի լնու զբանական պարտս իր բարիք, պիտանի ծառայութեամբ նուիրել զանձն իր ազգի, ապա եկեղեցոյ եւ ապա հայրենեաց եւ որք արտաքոյ այսոցիկ տեսանին չհամարեալ յազգս, զգամ յանձն իմ այս գտոյն առաքինական բարեմասնութեան, որում եւ փափագիմ ի սրտէ զբանական պարտս հատուցանել, զի ո յք ըմթերցեալ զպատմագրութիւն կիրակոս Գանձակեցոյ եւ զճանապարհորդութիւն ոմանց ազգասիրաբար այցելելոց հոչակատր մեծաստանին Հաղարծնոյ, վասն առաջին պայծառութեամբ ու շքեղութեամբ եւ մշտամոռնչ սաղմոսերգութեամբ սրբագումար միաբանից պատսպարելոց ընդ հովանեաւ թոնոց սրբութեանն նորին, եւ զայժմեան անշքութիւն տխուր տեսարանի նոյն սրբութիւն վայրի ոչ վշտասցի հոգեպէս ընդ այն ամայութիւն: Վեհափառ Տէ՛ր, ցանկութիւն իմ է մաքրիլ եւ յարդարիլ զայն տեղի սրբութիւն, եթէ ոչ ըստ առաջին վստեմութեամբ, գէթ սրբութեամբ եւ մաքրութեամբ պահպանութիւն, վայրուցն գոլով առիթ թերեւս լիցի ինձ զայն տեղի յապագայ ժամանակս օգտակարս եւ պիտանիս վասն ընդհանրական Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ընծայեցուցանել, վասն հայցելով այսու աղերսագրութեամբ զմարդասիրական գութ եւ զազգասէր օժանդակութիւն Ձեր յայս Աստուածահաճոյ գործ, աղաչեմ ազատ կացուցանել զիս ի թուաց միաբանից Սրբոյ Էջմիածնի եւ հրամայել ինձ զբնակութիւն իմ կալնու յայն մեծաստան, որով իմ եւ եղէց յաւիտեան գոհաբան զՁերհաց Ձերում վեհաստիճան օծութեամբ:

Նորին Վեհափառութիւն ի վերայ յիշատակեալ խնդրագրոյ արարեալ է այսօրինակ մակագրութիւն զանձնիմ ի տեղեկութիւն Սիմօնի, զի խնդրատու Պօղոս վարդապետն Տէր Մարգարեան միաբան Աթոռոյն կարգեցաք արդէն ըստ թախանձացն վանահայր առանձին կոնդակաւ մերով ի վանս Հաղարծնի, զորմէ հարկ է եւ

Ատեանիդ ըստ կարգին ազդ առնել մարմնաւոր իշխանութիւնն ի գիտութիւն անցին եւ յապահովութիւն վիճակի վանահօրն»:

ՀՐԱՄԱՅԵՑԻՆ. որովհետեւ վանքն Հաղարծնի ենթադրի տեսչութիւն թեմական կառավարութիւն վրաստանի եւ Իմերեթիոյ, վասն զվերոտողեալ տնօրէնութեան վեհափառ կաթողիկոսի ծանուցանել կոնսիստորիային Տփլիսիսայ առ ի հոգալոյ զամենայն զկարեւորսն պահպանութեամբ եւ իրաւանց վանուցն, համեմատ համանման նմին վանօրէից գտանեցելոց ընդ նորան տեսչութեամբ: Չորմէ հրամանագրով տուեալ տեղեկութիւն եւ նորոզ նշանակեալ վանահօր նորին Պօղոս վարդապետին պատուիրել ի դէպս հարկաւորութեանց եւ այլոց գործոց վերաբերելոց վանքական կառավարութեան դիմել ուղղակի յԱտեան կոնսիստորիային, իբրեւ մերձաւոր իրում անմիջական իշխանութեան եւ ըստ այսմ կազմեալ զնոր գործ, այժմէն իսկ աւարտեալ համարել վասն տարոյ ի ժամուն ի դիւանն ի պահեստ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՍԻՆՕԴԻ

ՎՇՏԱԿԻՐ ՄԱՏԹԷՆՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Անդամներ Սինօդի

Եղիազար արքեպիսկոպոս

Գրիգոր արքեպիսկոպոս

Գէորգ արքեպիսկոպոս

Սարգիս վարդապետ Տէր Գրիգորեան

Ատեանդպիր (ստորագրություն)

Փաստաթուղթ երկրորդ

Ի 11 մարտի 1864 ամի, Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Սինօդիս Սրբոյ Էջմիածնի լուան զյայտարարութիւն Հոգեւոր կառավարութեան Հայոց Աղեքսանդրապօլոս ի 22 փետրուարի անցելոյ համարու 151, յորում գրի, թէ ի նմին լուան զկոնդակ վեհափառ կաթողիկոսի Ամենայն Հայոց Տեառն Մատթէոսի ի 28 յունուարի տարույս համարու 80, յորում գրի այսպէս. «Հոգեւոր կառավարութիւն Աղեքսանդրապօլոս ծանուցանեմք, ըստ որում հռչակելի Սուրբ մեծաստանն Հաղարծինու նոր ի նորոյ ձեռնարկութեամբ Պօղոս վարդապետի նորին վանահօրն սկիզբն առնու կանգնելոյ, ուստի եւ պէտս ունի օժանդակութիւն առ այժմս յաղագս ամայի մնալոյն ի բազմաց հետէ, վասն պատուիրեմ դմին անյապաղ զգիւղն Համ-

զաչիման դարձուցանել առժամանակ մի ի կառավարություն Սրբոյ վանիցն, որոյ արդէամբքն կեցութիւն գտեալ վիճակի բարօքապէս յիշեալ վանահայրն կարասցէ շէն առնել զվանքն, որ է պարծանք մերոյս Ազգի»: Ի լսելն զայս անդամք կառավարութեան յայտնեցին յԱտեանի, թէ Համզաչիման անուանեալ գիւղն է նոյն ինքն Բօզի գիւղն, որ ի կողմանս Փամբակաձորայ: Կարգաւորեալ է համաձայն ներկայ կոնդակի Վեհափառ կաթողիկոսի Ամենայն Հայոց, զգիւղն Համզաչիման, նոյն է Բօզի գիւղն Փամբակաձորայ, «դարձուցանել առ ժամանակ մի ի կառավարութեան Սրբոյ վանիցն Հաղարծինու, եւ առ այս վախճան հրամանագրել բարեկարգին Փամբակաձորայ որպէս զստացումն ամենատեսակ վիճակապատկան եւ աթոռապատկան արդեանց անանապէս եւ զամենատեսակ բարեկարգչական պարտաւորութիւնս այնր գեղջ թողոյ այսուհետեւ ընդ վերահասու ընդ վանահօր այնր վանից առանց ձեռնամուխ լինելոյ յայնս, ծանուցանելով զայնմանն եւ հասարակութեան տեղտոյն ի գիտութիւն եւ ընդ նմին հասուցանել զհաւաստի տեղեկութիւն, թէ Համզաչիման անուանեալ գիւղն է նոյն ինքն Բօզի գիւղն, թէ այլ է: Եւ եթէ այլ գիւղն, որն է՞ յականէ յանուանէ, զորմէ հաղորդել վանահօրն այնր վանից առանձին գրութեամբ ի գիտութիւն այնու, զի նա զհաշիւս ամենատեսակ արացեալ արդեանց եւ զայլ ամենայն հարկաւոր տարեկան ծանօթիւս եւ զհաշիւս եկեղեցւոյն այսր գեղջ ուղղակի յինքննէ հասուցէ ի վիճակային կոնսիստորիայն Հայոց Երեսանայ եւ զամենից վերոյգրելոցն յայտ առնել Սինօղիս Սրբոյ Էջմիածնի եւ վիճակային կոնսիստորիին Երեսանայ վասն տեղեկութեան պարտաւորութեան տնօրինութեամբ:

ՀՐԱՄՆԱՅԵՑԻՆ, Որովհետեւ Հոգեւոր կառավարութիւն Հայոց Աղեքսանդրապօլու համաձայն կոնդակի Վեհափառ կաթողիկոսի Ամենայն Հայոց Տեառն Մատթէոսի արարեալ է վասն վերոյգրեալ առարկայի զպատշաճաւորն կարգաւորութիւն վասն զվերոյգրեալ յայտարարութիւն նորին ընկալեալ ի տեղեկութիւն կցել ընդ գործոյն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՍԻՆՕՂԻ

ՎՕՏԱԿԻՐ ՄԱՏԹԷՆՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԵՆ ՀԱՅՈՑ

Անդամք Սինօղի

Եղիազար արքեպիսկոպոս

Գրիգոր արքեպիսկոպոս

Գէորգ արքեպիսկոպոս

Ատեանդպիր (ատորագրութիւն)

Լուեալ զայս օրագրութիւն Տ. Ատենակալայ Սիւնօղի եւ բարեհաճեալ ընդ այն ստորագրեցին այլ անդամք սորին արքեպիսկոպոսունքն Ղուկաս, Մակար, եւ Սարգիս. եւս եւ վարդապետն Սարգիս գտանէին ի բացակայութիւն:

Կարգապահ Յ. Խաչատրեանց:

Փաստաթուղթ երրորդ

Ի 21 օգոստոսի 1864 ամի, Ըստ Հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Սիւնօղիս Սրբոյ Էջմիածնի լուան զգեկուցումն, Սիւնօղս օրագրութեամբ ի յուլիսի տարույս, որ վասն կարգման նորոգ անդամոց իւրոց ի միջի այլոց եզրակացուցեալ էր բացակայեալ գտանեցեալ անդամոց սորին, այն է Յովհաննէս արքեպիսկոպոս Ապանեանց եւ Պօղոս եւ Գրիգոր վարդապետաց հանել զառանձին հրամանագիրս յաղագս փութանակի աճապարելոյ նոցին յէջմիածին ի վարումն նորոգ պաշտամանց իւրեանց: Ի կատարումն որոյ եւ ի 4 յուլիսի անցելոց համարօք 1002, 1006, եւ 1008 առաքեաց նոցա զառանձին հրամանագիրս:

Համաձայն այսմ կարգադրութեան նորոգ նշանակեալ անդամ սորին Պողոս վարդապետն ժամանեալ յէջմիածին յայս թիւ ներկայացաւ յԱտենան Սիւնօղիս: Ուստի ՀՐԱՄԱՅԵՑԻՆ, Համաձայն վերոյգրեալ օրագրութեամբ Սիւնօղիս զկնի ածելոյ յերդումն օրինադրեալն կարգաւ թոյլատրել Պօղոս վարդապետին այժմէն իսկ ի վարումն անդամակցական պաշտաման իւրոյ, որոյ վասն եւ զանուն նորա յայսմ հետէ յօրագրութիւն սորին ցուցանել ներկայ, զորմէ եւ յայտնել կարգապահի սորին ստորագրութեամբ ի վերայ այսր օրագրութեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ՍԻՆՕՂԻՍ

ՎՇՏԱԿԻՐ ՄԱՏԹԷՆՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Անդամներ Սիւնօղի

Յովհաննէս արքեպիսկոպոս
Գրիգոր արքեպիսկոպոս
Գէորգ արքեպիսկոպոս
Յովհաննէս վարդապետ
Թադէոս վարդապետ
Պօղոս վարդապետ Մարգարեանց
Գրիգոր վարդապետ Առուշանեան

Փաստաթուղթ չորրորդ

Ի 18 սեպտեմբերի 1864 ամի, Հստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Սիմոնի Սրբոյ Էջմիածնի լուան գլխատարարութիւն անդամոյ Սիմոնի Պօղոս վարդապետի Տէր Մարգարեանց ի 16 սեպտեմբերի տարւոյն համարաւ 41 յանուն վեհափառ կաթողիկոսի Ամենայն Հայոց եւ ի նորան սրբութեան մակագրութեամբ յանձնեալ ի տնօրէնութիւն սորին յորում գրէ այսպէս. «թէպէտ ըստ միջնորդական գրութեամբ Զեր, որ առ տէր Փոխարքայն Անանակեցոց Անդամ լուսատրչական Սիմոնի Սրբոյ Էջմիածնի եւ Աերկայս վարիմ գնոյն պաշտօն, սակայն յառաջ քան զայս կատարելի գպաշտօն վանահայրութեան Հաղարծնի Սրբոյ մենաստանին, եւ այն ըստ բարձու հրամանի Զերդ վեհափառութեան ուրանօր ոչ սակաւ աշխատութիւնս ունիմ, վասն որոյ խնդրէմ յոնարհաբար ի վեհափառութենէդ շնորհ առնել մեզ հրամայել ում արժանն է, թոյլատրել մեզ սահմանեալն կարգաւ ամսաչափ միջոցաւ գնալ գործել անդանօր վերահասութիւն կալուածոց կամ եկամտից սրբոյ ուխտին եւ սպա վերադառնալ անդի յետոս:

Ի վերայ այս յայտարարութեան վեհափառ կաթողիկոսն արարեալ է այս օրինակ մակագրութիւն «յանձնենք Սիմոնիտ ըստ սահմանեալ կարգին մի ամսեայ ժամանակաւ արձակել զՊօղոս վարդապետն անդամ դորին գնալ ի վերահասութիւն Հաղարծնի վանից, բացակայ համարելով զնա յօրագիրս Սիմոնիտ»:

ՀՐԱՄԱՅԵՑԻՍ - Համաձայն յայտարարութեան անդամոյ սորին Պօղոս վարդապետի Տէր Մարգարեանց եւ մակագրութեամբ վեհափառ կաթողիկոսի Ամենայն Հայոց տալ մնա զմի ամսեայ արձակուրդ վասն գնալոյ ի վերահասութիւն Հաղարծնի վանից եւ վերադառնալոյ որոյ վասն եւ տալ մնա զմի ամսեայ անցագիր: Եւ մինչ ցվերադարձ նորին ի բացակայութեան ցուցանել մնա յօրագրութիւնս սորին բացակայ, գորմէ եւ յայտնել կարգապահի դիւանատան Սիմոնի ստորագրութեամբ ի վերայ զեկուցմանս:

ԱՏԵՆԱՊԵՏ ՍԻՆՕԴԻՍ

ՎՇՏԱԿԻՐ ՄԱՏԹԷՆՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԵՆ ՀԱՅՈՑ

Անդամք Սիմոնի

Յովհաննէս արքեպիսկոպոս

Գրիգոր արքեպիսկոպոս

Գէորգ արքեպիսկոպոս

Յովհաննէս վարդապետ

Թադէոս վարդապետ

Պօղոս վարդապետ

Գրիգոր վարդապետ